# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

«Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ն ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագիրը |
|---|---|
| 1 | Ապրանքները պատրաստվում են Հայաստանի Հանրապետության կառավարության 20.12.2018թ. N 1517-Ա որոշմամբ հաստատված չափորոշիչներին և ձևերին (նկարներին) համապատասխան: Տղամարդու գլխարկ (կեպի)՝ գլխարկանշանով (Ձև 2): Պատրաստվում է մուգ կապույտ կիսաբրդյա կտորից (67% բուրդ, 33% պոլիեսթեր, 317 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%) և բաղկացած է թասակից և երկարացված գլխարկահովհարից: Երկու կողմից ունի երկուական օդանցք: Գլխարկի առջևի կենտրոնական մասում ամրացվում է գլխարկանշանը (նշված որոշմամբ սահմանված պահանջներին համապատասխան (Ձև 5)), որը նախապես (մինչև մատակարարումը) համաձայնեցվում է Գնորդի հետ: Աստառը պատրաստվում է բնական մետաքսից (8-C5-BШ արտիկուլից մուգ կապույտ կտորից 100 գ/մ2 խտությամբ, թույլատրելի շեղում՝ +, - 2%), ներսի ժապավենը՝ բնական կաշվից՝ 30 մմ լայնությամբ: Գլխարկի թասակի բարձրությունը 8-9 սմ է: Հետևի մասում առկա է գլխարկի թասակի չափսը փոխելու գոտի՝ կարգավորման սեղմակներով: Գլխարկները (կեպիները) ներսամասից պետք է ունենան պիտակ, որի վրա պետք է նշված լինի դրանց չափսը: Նախքան գլխարկների (կեպիների) պատրաստումը գլխարկների (կեպիների) գունային գամման համաձայնեցվում է Գնորդի հետ: Գլխարկների (կեպիների) ամբողջ քանակը պետք է պատրաստվի միևնույն գործվածքից: Ընդ որում, նախապես (մինչև գլխարկների (կեպիների) կարելը) Վաճառողը Գնորդին է ներկայացնում նշված գործվածքի բաղադրության, կարգի, ներկի կայունության և մակերեսային խտության վերաբերյալ ՀՀ-ում հավատարմագրված կազմակերպության կողմից տրված լաբորատոր հետազոտության եզրակացություն: Ապրանքների փաթեթավորումը՝ պոլիէթիլենային թափանցիկ պարկերով, |

| | |
|---|---|
| | պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինեն ապրանքի անվանումը, քանակը, չափսերը: Ապրանքների տեղափոխումն ու բեռնաթափումը իրականացնում է Վաճառողը՝ իր միջոցների հաշվին, նախապես Գնորդի հետ համաձայնեցնելով մատակարարման կոնկրետ հասցեն: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

И / П Армине Овсепян Элбек в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 1 | - |